ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-68-ԱՈ-17
2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՐՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2021 թվականի սեպտեմբերի 2-ին, քննարկելով դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց անձնական գործերը և մասնագիտական փորձը Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 10-ին և սեպտեմբերի 11-ին կայանալիք նիստերում ներկայացնելու համար զեկուցողներ ընտրելու հարցը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով, 94-րդ հոդվածի 3-րդ մասով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-110 որոշման 13-րդ կետով և հիմք ընդունելով վիճակահանության արդյունքները՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց անձնական գործերը և մասնագիտական փորձը Բարձրագույն դատական խորհրդի նիստերում ներկայացնելու համար ընտրել զեկուցողներ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 2
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2021թ. սեպտեմբերի 2-ի թիվ
ԲԴԽ-68-ԱՈ-17 որոշման

Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց անձնական գործերը և մասնագիտական փորձը Բարձրագույն դատական խորհրդի նիստերում ներկայացնելու համար ընտրված զեկուցողներ

Բարձրագույն դատական խորհրդի զեկուցող անդամի ազգանունը, անունը:	Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձի ազգանունը, անունը:
Բեքմեզյան Գրիգոր	**10.09.2021թ.** Պետրոսյան Հայկ: **11.09.2021թ.** Հարությունյան Շիրակ, Հարությունյան Հայկ:
Խաչատուրյան Դավիթ	**10.09.2021թ.** Թադևոսյան Տարոն: **11.09.2021թ.** Կոծինյան Ժաննա:
Մակյան Մեսրոպ	**11.09.2021թ.** Սմբատյան Ռոման, Յուզբաշյան Սամվել:
Մելիքջանյան Լիպարիտ	**10.09.2021թ.** Չիչոյան Ժորա: **11.09.2021թ.** Հարությունյան Արշակ:
Միքայելյան Ստեփան	**10.09.2021թ.** Ասատրյան Արամայիս, Ալավերդյան Կարեն:
Մխիթարյան Անի	**10.09.2021թ.** Արզումանյան Մարտին, Մկրտչյան Էդուարդ, Արամյան Մուշեղ:
Քոչարյան Վիգեն	**10.09.2021թ.** Հովհաննիսյան Սարգիս, Մարտիրոսյան Արամ: